ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԹՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

1986 թ. մայիսի 21—23-ին ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում կայացավ թուրքագիտական կոնֆերանս նվիրված Օսմանյան կայսրության պատմության պրոբլեմներին XIX—XX դարերի սահմանագծում։ Այն կազմակերպել էին արևելագետների համամիութենական ասոցիացիայի հայկական բաժանմունքը և ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտը։

Կոնֆերանսին մասնակցում էին մի շարք ճանաչված գիտնականներ Երևանից, Մոսկվայից, Լենինգրադից, Բաքվից, Թբիլիսիից։ Զեկուցումներով հանդես եկան նաև մի խումբ երիտասարդ թուրքագետներ Երևանից, Ալմա-Աթայից, Մախաչկալայից։

Իր բացման խոսքում ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյանը ասաց, որ գիտաժողովի անցկացումը Երևանում պատահական չէ. այն պայմանավորված է ինչպես հայ թուրքագիտության բազմադարյան ավանդույթներով, այնպես էլ Սովետական Հայաստանի թուրքագետների հաջողություններով վերջին քառորդ դարի ընթացքում։ Նա թվարկեց հայ թուրքագետների մի շարք աշխատություններ, որոնք բարձր գնահատական են ստացել Սովետական Միության արևելագետների կողմից։ Վերջին թուրքագիտական նստաշրջանից հետո (այն տեղի է ունեցել 1983 թ. Մոսկվայում) լույս են տեսել նոր ուսումնասիրություններ, հայտնաբերվել են նոր փաստաթղթեր։ Նրանց ընդհանրացումը սույն կոնֆերանսի ընթացքում կարևոր նշանակություն կունենա սովետական թուրքագիտության, մասնավորապես օսմանագիտության հետագա զարգացման համար,—նշեց Գ. Խ. Սարգսյանը։ Վերջում նա հաջողություն մաղթեց մասնակիցներին և հույս հայտնեց, որ կոնֆերանսը կանցնի բարձր գիտական և տեսական մակարդակով։

Կոնֆերանսում կարդացված զեկուցումների թեմատիկան ուներ բավական լայն ընդգրկում։ Ներկայացված շուրջ 30 զեկուցումներում արծարծվում էին XIX դարի վերջի և XX դարի սկզբի Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական զարգացման, ներքին և արտաքին քաղաքականության, հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի, գաղափարական և մշակութային կյանքի մի շարք հետաքրքիր և դեռևս քիչ ուսումնասիրված հարցեր։

Մեծ հետաքրքրությամբ լսվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի (Երևան) «Գերմանական պաշտոնական փաստաթղթերը արևմտահայության ցեղասպանության մասին» խորագիրը կրող զեկուցումը։ Հենվելով հարուստ փաստական նյութի վրա, նա համոզիչ կերպով ցույց տվեց, որ 1915—16 թթ. Թուրքիայում գտնվող գերմանական պաշտոնական ներկայացուցիչները իրենց կառավարությանը հղած գաղտնի զեկուցագրերում, նամակներում, հեռագրերում մանրամասն նկարագրել են արևմտահայության ոչնչացման սոսկալի պատկերը։ Այս փաստաթղթերը մեկ անգամ ևս ամենայն հստակությամբ վկայում են, որ երիտթուրքերի պարագլուխները ծրագրել և անմարդկային դաժանությամբ իրականացրել են XX դարի առաջին ցեղասպանությունը։ Զեկուցողը նշեց, որ այսօր պատմության թուրքական և ամերիկյան կեղծարարները փորձում են ժխտել անգամ ցեղասպանության փաստը։ Նրանք լայնորեն տարածում են իրենց հակագիտական տեսակետները, չանք չեն խնայում շփոթության մեջ գցելու հասարակական կարծիքը։ Բուրժուական պատմագիտության հետադեմ ներկայացուցիչներին արժանի հակահարված տալու տեսանկյունից կայզերական Գերմանիայի՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության գլխավոր դաշնակցի, պաշտոնական փաստաթղթերի վկայությունները հայերի ցեղասպանության մասին գիտական լայն շրջանառության մեջ դնելը ունի կարևոր այժմեական նշանակություն,—եզրակացրեց Մ. Գ. Ներսիսյանը։

Գերմանական արխիվային փաստաթղթերը, քաղված հասարակական գործիչ և հումանիստ Ի. Լեփսիուսի անձնական արխիվից, կազմել էին պ. գ. թ. Հ. Ս. Կորխմազյանի (Երևան) զեկուցման աղբյուրագիտական հիմքը։ Նա պատմեց այն մասին, որ գերմանական առաջավոր հասարակայնությունը իր ցասման ձայնը բարձրացրեց

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ քաղաքականության դեմ։

Մի շարք զեկուցումներ նվիրված էին սոցիալ անտեսական պրոբլեմներին։ Ուշագրավ էր պ. դ. թ. Մ. Ս. Մեյեռի (Մոսկվա) ելույթը։ Մանրամասն վերլուծելով XIX դարում Օսմանյան կայսրությունում անցկացված մարդահամարների տվյալները, նա ոչ միայն բացահայտեց դեմոգրաֆիական փոփոխությունների գլխավոր օրինաչափությունները և տենդենցները, այլ նաև կարողացավ ցույց տալ, որ երկրի դեմոգրաֆիական վիճակը իր ազդեցությունը ունեցավ կառավարող շրջանների քաղաքականության վրա։ Մասնավորապես նա նշեց, որ Անատոլիայում քրիստոնյաների թվի անը (XIX դարի 80-ական թթ. այն հասավ ողջ բնակչության 27 տոկոսին) դարձավ Աբդուլ Համիդ II-ի պանիսլամիզմի քաղաքականության որդեգրման և հայկական շարդերի կազմակերպման դրդապատճառներից մեկը։ Պ. գ. դ. Ա. Ս. Ղամբարյանը (Երևան) խոսեց Արևմտյան Հայաստանում կապիտալիզմի զարգացման առանձնահատկությունների մասին։ Նա գիտական շրջանառության մեջ դրեց հետաքրքիր տվյալներ, քաղված հայկական աղբյուրներից, որոնք դեռևս քիչ են ծանոթ սովետական թուրքագետներին։

Պ. գ. թ. Ն. Վ. Կոմախիձեի (Թբիլիսի) զեկուցումը նվիրված էր Օսմանյան կայսրության առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափության պրոբլեմին։

ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ. գ. թ. Ռ. Գ. Սահակյանի զեկուցումը, որը նվիրված էր երիտթուրքերի և քեմալականների ազգային քաղաքականության մի քանի վիճելի հարցերի լուսաբանմանը, հետաքրքրություն առաջացրեց ներկա գտնվողների մոտ։ Հիմք ունենալով հարուստ և բազմակողմանի փաստացի նյութ, այդ թվում նաև մի շարք նորահայտ արխիվային փաստաթղթեր, հեղինակը ցույց տվեց և հետագայում ծայր առած մտքերի փոխանակման ընթացքում համոզիչ կերպով հաստատեց իր զեկուցման գլխավոր թեզը այն մասին, որ քեմալականները ազգային հարցում, ըստ էության, շարունակեցին երիտթուրքերի մեծապետական-շովինիստական քաղաքականությունը, տալով նրան սոսկ նոր երանգավորում։ Ուշագրավ էին նաև Ռ. Գ. Սահակյանի եզրահանգումները XX դարի սկզբին Թուրք կառավարող շրջանների ազգային քաղաքականության տեսական հիմքը հանդիսացող գաղափարական դոկտրինների և այդ քաղաքականության առանձին փուլերի առանձնահատկությունների մասին։

Պ. գ. թ. Ա. Հ. Փափազյանը (Երևան), օգտագործելով մեծ վեզիր Քյամիլ փաշայի հիշողությունները, ցույց տվեց թուրքական վերնախավի այդ ներկայացուցչի դիրքորոշումը Արևմտյան Հայաստանում տիրող իրադրության վերաբերյալ։

Մի խումբ թուրքագետների ելույթները նվիրված էին գաղափարական, ընդհանուր տեսական, ինչպես նաև մշակութային հարցերի լուսաբանմանը։ Նրանցից կարելի է նշել փ. գ. թ. Է. Յու. Հասանովայի (Բաքու) զեկուցումը, որտեղ հեղինակը մանրամասն քննեց և բնութագրեց XX դարի սկզբի թուրքական բուրժուական քաղաքական գործիչներ և գաղափարախոսներ Մեհմեդ Սաբահէդդինի և Զիյա Գյոքալփի կողմից առաջ քաշված հասարակական-քաղաքական դոկտրինները։ Զեկուցման դրույթները հետաքրքիր ու նոր էին, բայց և ոչ անվիճելի։ Ինչպես նշեցին մտքերի փոխանակման ընթացքում ելույթ ունեցողները, նրանց մի մասը կարոտ է հետագայում ավելի խոր և բազմակողմանի ուսումնասիրման։ Աչքի ընկավ պ. գ. թ. Ի. Ե. Պետրոսյանի (Լենինգրադ) զեկուցումը, որտեղ հեղինակը նորովի մեկնաբանեց ավանդականի և նորի փոխհարաբերության հարցը թուրքական ռեֆորմատորական շարժման մեջ։ Պ. գ. թ. Է. Է. Զամանովան (Բաքու) պատմեց սոցիալիզմի գաղափարների թափանցման մասին Թուրքիա։ Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան երիտասարդ թուրքագետներ Հ. Ս. Սաֆիանեյանը և Ա. Ռ. Հովհաննիսյանը (երկուսն էլ՝ Երևան)։

Պ. գ. դ. Հ. Զ. Ալիևը (Բաքու) իր զեկուցումը նվիրել էր «1905—1907 թթ. հեղափոխությունը Ռուսաստանում և Թուրքիան» թեմայի ուսումնասիրությանը։ Մոսկվացի թուրքագետ, պ. գ. թ. Ս. Ֆ. Օռեշկովան առաջարկեց մի քանի նոր մեկնաբանություններ, կապված օսմանյան ինքնակալության տիպաբանության և էվոլյուցիայի ուղիների հետ։

Կոնֆերանսում կարդացվեցին նաև պատմագիտական բնույթի զեկուցումներ։ Քննադատաբար վերլուծելով ժամանակակից թուրք պատմաբանների և սոցիոլոգների բազմաթիվ աշխատություններ, պ. գ. դ. Պ. Մոյիսեևը (Մոսկվա) ներկա գտնվողների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ օսմանյան ագրարային կարգերի առանձնահատկությունները այսօրվա Թուրքիայում դարձել են ոչ միայն ինտենսիվ ուսումնասիրությունների օբյեկտ, այլ նաև օգտագործվում են գաղափարական պայքարում՝ տարբեր հոսանքներին պատկանող գիտնականների կողմից իրենց տեսակետները հաստատելու նպատակով։ Այս զեկուցումով մեկ անգամ ևս ցույց տրվեց, թե որքան կարևոր և հրատապ են օսմանագիտական ուսումնասիրությունները։

Պ. գ. գ. Ե. Ղ. Սարգսյանը (Երևան) հանգամանալից խոսեց 60—80-ական թթ. սովետա-

Հայ պատմաբանների կողմից XIX դարի վերջի-XX դարի սկզբի Թուրքիայի պատմության պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին և մեկ առ մեկ արժեքավորեց լույս տեսած մենագրությունները։ Զեկուցողը նշեց, որ Սովետական Հայաստանի Թուրքագետների կողմից առաջ քաշված տեսակետները և տրված գնահատականները գնալով ստանում են ավելի լայն ճանաչում և արդեն իսկ արտացոլվել են Մոսկվայում հրատարակված մի շարք աշխատություններում։ Հայ Թուրքագետները ակտիվորեն մասնակցում են նաև եղբայրական հանրապետությունների Թուրքագիտական կենտրոնների հետ համատեղ հրապարակվող կոլեկտիվ մենագրությունների նախապատրաստմանը։ Այս ամենը վկայում է այն մասին, որ Թուրքագիտությունը Սովետական Հայաստանում ապրում է իր վերելքի շրջանը,—եզրակացրեց Ե. Ղ. Սարգսյանը։ Լենինգրադցի Թուրքագետ Ի. Ե. Պետրոսյանը ծանոթացրեց ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքում Ցու. Ա. Պետրոսյանի ղեկավարությամբ տարվող օսմանագիտական ուսումնասիրությունների հետ։

Զգալի թիվ էին կազմում երիտԹուրքերի կառավարման օրոք Օսմանյան կայսրության ներքին և արտաքին քաղաքականության հարցերին նվիրված զեկուցումները։ Պ. գ. դ. Վ. Ա. Բայբուրդյանը (Երևան) հարուստ արխիվային նյութերի հիման վրա բնութագրեց Իրանի նկատմամբ օսմանյան Թուրքիայի վարած նվաճողական քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Ուշադրավ էր նաև ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ Ն. Ս. Խենկոյանի 1911—12 թթ. Թուրքիայում ծավալված միջկուսակցական պայքարի առանձին դրվագներին նվիրված զեկուցումը, որտեղ օգտագործված էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի փաստաթղթերը։ Պ. գ. թ. Ա. Ա. Կոլեսնիկովի (Ալմա-Աթա) զեկուցման մեջ խոսվում էր առաջին բալկանյան պատերազմի նախօրյակին օսմանյան բանակի ցածր բարոյակամային պատրաստականության և երիտԹուրքերի ռազմական քաղաքականության մեջ տեղ գտած սխալների մասին։ Կարդացվեց նաև «Ազգային հարցը Օսմանյան կայսրության Թուրքական ընդդիմադիր կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում (1908—1913 թթ.)» խորագրով զեկուցումը, որի հեղինակն էր պ. դ. թ. Ռ. Ա. Սաֆրաստյանը (Երևան)։

Կոնֆերանսի մասնակիցները հանդես եկան նաև զեկուցումներով, որտեղ արծարծվում էին Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հետ կապված հարցեր։ Ընդ որում, կարդացված զեկուցումներում խոսքը գնում էր ոչ միայն հայերի, այլ նաև արաբների և քրդերի հակաօսմանյան ազատագրական պայքարի առանձին դրվագների մասին։ Հիշատակման է արժանի բ. դ. թ. Մ. Հ. Քոչարի (Երևան) զեկուցումը։ Հետաքրքիր էին նաև պ. դ. թ. Զ. Ջալիլի և պ. դ. թ. Ե. Հ. Նաջարյանի (երկուսն էլ՝ Երևան) ելույթները։

Կարդացվեցին նաև մի շարք այլ զեկուցումներ։

Վերջում տեղի ունեցավ կոնֆերանսի արդյունքների ամփոփում։ Ելույթ ունեցողները գոհունակությամբ նշեցին, որ դիտաժողովը անցավ բարձր մակարդակով և մեկ անգամ ևս ապացուցեց նման նստաշրջանների նշանակությունը գիտության հետագա առաջընթացի համար։

Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայ միջնադարյան գրականությանը նվիրված գիտաժողովը, որ կազմակերպել էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը, տեղի ունեցավ Երևանում 1986 թ. սեպտեմբերի 15—19-ը։ Բավական լայն էր գիտաժողովի մասնակիցների կազմը. Երևան էին ժամանել հայագետներ Մոսկվայից, Լենինգրադից, Թբիլիսիից, Բաքվից, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից, Լեհաստանից, Հունգարիայից, Մոնղոլիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունից, Ճապոնիայից, Բելգիայից, Լյուքսեմբուրգից, ինչպես նաև Սիբիրի տարբեր գաղթօջախներից։ Գիտաժողովին մասնակցում էին Սովետական Հայաստանի բազմաթիվ գիտնականներ, որոնք աշխատում են գիտությունների ակադեմիայի համակարգում, Մաշտոցի անվան Մատենադարանում, Երևանի պետական համալսարանում և այլ բարձրագույն դպրոցներում։ Գիտաժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ս. Ավետիսյանը, ապա ընթերցվեց Հայկ. ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ողջույնի խոսքը։